ցայց տալը։ Աղջիկները միայն ազատ են փաթաթներից և մինչև ամուսնութիւնը բացերես են ման գալիս։

Կոշիկ։ Ընդհանրապէս ամառ ժամանակ թէ կին, թէ աղջիկ ոտաբոբիկ են շրջում. իսկ ձմեռը հագնում են սև և կարմիր ոտնամաններ, որի ծայրերը սրածայր են և կեռ։ Դա տեղական բարբառով «մաշիկ» է կոչ։ում, որ գնում են գիւղում աշխատող մաշկակարներից։ Թէ կնոջ, թէ հարսի և թէ աղջկայ կոշիկները նոյնն են։

Հարսները գլուխներին կապում են «թախտաձ»։ վզից կախում «աշմ»։ Աղջիկները հագնում են կանանց պէս, միայն այն զանազանութեամբ, որ նրանք փաթաթանք չունեն գլխներին, այլ գնում են ասեղնագործած գլխարկներ, որոնց տակից ընկնում, ծածանում են ծամերը։ Գլուխները սանրում են, մէջտեղը մի գիծ (արտակ) թողնում և ծամերը ձգում ցած, որի ծայրերին կապում են մի քանի գունաւոր ուլունքներ։ Փոքր աղջիկները վզից կախում են զանազան ուլունքներ։

Բաղանիս։ Փէրիայի հայաբնակ ոչ մի գիւղում չկայ բաղանիս, բացի Նամակերտից, այն էլ ամեն օր բաց չէ, այլ ամիսը կամ շաբաթը մի անգամ։ Ընդհանրապէս թէ տղամարդիկ և թէ կանայք լողանում են տանը (գոմում), երբ կամենում են, իսկ փոքր ինչ հարուստները 3—4 ամիսը մի անգամ կամ աւելի ուշ գնում են բաղանիս։

ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵՐ ԵՒ ՍՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Բուի ձայնը չարագուշակ նշան են համարում. եթէ բուն բուում է մի տան վրայ, հաւատում են, որ տան անդամներից մինը կմեռնի։
Գիշերը գլխաբաց դուրս չեն գալիս, որպէսզի սատանաները չիմանեն։
Գիշերը պարսկի կերեզմանի մօտ չեն գնում, որովհետև մեռելների ուրուականները նրանց կհալածեն իբրև «անհաւատների»։
Գիշերը վախենում են ջրհորի մօտ գնալ. որովհետև միջի դևերը դուրս կգան և կբռնեն։
Գիւղացին տնից դուրս գալիս՝ եթէ ձայն տաս նեռից, յետ է դառնում և այլևս չի գնում, դուշակելով՝ որ այդ օրայ գործը չպիտի